

Հաստատված է  
«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության  
ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի  
Հոգաբարձուների խորհրդի նախագահի՝  
Ռոբերտ Սուքիասյան

*R. Sukiasyan*

“ \_\_\_\_\_ ” \_\_\_\_\_ 2016թ.

2015թ.-ի Տարեկան հաշվետվություն

2016թ.-ին լրանում է Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇԱՏԿ) գործունեության 10 տարին: Մի տասնամյակ հետո, անդրադառնալով հիմնադրամի անցած ուղղուն, վստիորեն կարելի է պնդել, որ հիմնադրամը գրավում է իր ուրույն տեղն ու դերը թե՛ ազգային և թե՛ միջազգային ասպարեզներում : Հավատարիմ մնալով իր կանոնադրական նպատակներին՝ կենտրոնը ի թիվս իր այլ գործառույթների շարունակում է տրամադրել որակավորումների ճանաչման և խորհրդատվական ծառայություններ, որոնք ուղղված են ուսումնական հաստատություններին, պետական մարմիններին, անհատներին, գործատուներին և բոլոր այն շահառուներին, ովքեր ցանկանում են տեղեկանալ ազգային և այլ երկրների կրթական համակարգերի, նրանցում շնորհվող որակավորումների, որակավորումների ազգային շրջանակների, նախկին փորձառության ճանաչման, համատեղ աստիճանների և այլնի վերաբերյալ:

Անցած տասնամյակը ՀՀ բարձրագույն կրթության համակարգի համար կարևոր ձեռքբերումների և միևնույն ժամանակ մարտահրավերների ժամանակաշրջան էր: ԱՓՇԱՏԿ-ի գործունեությունը եղել և շարունակում է մնալ համահունչ ազգային կրթական զարգացումներին և խթանում է դրանց իրականացումը:

ԱՓՇԱՏԿ-ի 2015թ-ի տարեկան հաշվետվությունը բաղկացած է 2 մասից՝ ներառելով Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի և Բոլոնիայի քարտուղարության կողմից 2015թ.-ի ընթացքում իրականացված հիմնական աշխատանքների անդրադարձը:

## ***ՄԱՍ 1. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն***

### **1. Տեղեկատվության տրամադրում շահառուներին և գործընկերներին**

2015թ-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ընդլայնել գործընկերների շրջանակը և համագործակցությունները, մշակել նոր ծրագրեր: Կազմակերպվել են հանդիպումներ միջազգային և տեղական կառույցների հետ՝ կրթական ոլորտում խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու նպատակով: Հանդիպումների ընթացքում քննարկվել են տարբեր երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունները, ՀՀ կրթական օրենսդրությունը և ճանաչման հարցերը, մասնավորապես՝ նախկին ուսումնառության ճանաչման և նախկին փորձառության գնահատման հիմնախնդիրները, ՀՀ որակավորումների ազգային շրջանակը, և այլն: Հատկապես հետաքրքիր էր Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահի և այլ պաշտոնական անձանց հետ հանդիպումը, որի ժամանակ նաև քննարկվեց հետագա հնարավոր համատեղ ծրագրերի իրականացման հարցը:

2015թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ակտիվորեն համագործակցել տեղական կառույցների հետ՝ տրամադրելով տեղեկատվության ՀՀ

նախարարություններին (ԿԳՆ, ՏԿԱԻՆ, Առողջապահության նախարարություն, Արդարադատության նախարարություն և այլն), դրանց ստորաբաժանումներին (քրեակատարողական հիմնարկներ, փրկարար ծառայություն և այլն), ՀՀ բուհերին և այլ պետական ու մասնավոր մարմիններին:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է համագործակցությունը որակավորումների ճանաչման համար պատասխանատու արտասահմանյան մարմինների հետ՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ կրթական համակարգի, շնորհվող որակավորումների և այլ կրթական փաստաթղթերի վերաբերյալ: Միջազգային համագործակցության շրջանակը հիմնականում ընդգրկել է ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ )FOJD-NARIC) ցանցի անդամ երկրները, Համաշխարհային կրթական ծառայությունը (World Education Services), Կրթության հետազոտությունների միջազգային հիմնադրամը (International Education Research Foundation), միգրացիոն ծառայությունները, օտարերկրյա ուսումնական հաստատությունները և այլն:

2015թ-ին շարունակվել է ԱՓՇԱՏԿ-ի և Ռուսաստանի Դաշնության Կրթության գնահատման գլխավոր պետական խորձագիտական կենտրոնի (Главэкспертцентр) ու Վրաստանի Կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (National Center for Educational Quality Enhancement) միջև համագործակցությունը, որը հատկապես ակտիվացել էր նախորդ տարիներին:

Հիմնադրամը ակտիվորեն մասնակցում է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ )FOJD-NARIC) միջազգային ցանցի կողմից նախաձեռնվող քննարկումներին, հարցումներին և ուսումնասիրություններին: Մասնավորապես անցած տարում ակտիվորեն քննարկվել և ուսումնասիրվել են .

- տարբեր երկրներում դոկտորական աստիճանների ճանաչման փորձառությունը և գոյություն ունեցող ընթացակարգերը,
- ոչ ավանդական որակավորումների ճանաչումը և դրանց մարտահարվերները,
- EQAR-ի ինքնագնահատման ուսումնասիրություն ճանաչման համատեքստում,
- բժշկական որակավորումների ճանաչումը և այլն:

Վերջին ժամանակաշրջանում քաղաքական զարգացումների հետ կապված հատկապես կարևորվել է փախստականների հարցը թե՛Ամարդու իրավունքների, թե՛Ա որակավորումների ճանաչման տեսակետից: Եվրոպայի փախստականների մեծամասնությունը Սիրիայի, Իրանի, Իրաքի, Աֆղանստանի և Գվինեայի քաղաքացիներ են: Հարց է առաջանում ինչպես կարող են բուհերը օգնել փախստականներին: Լեզվի դասընթացների կազմակերպումը, տարբեր մանկավարժական գործիքների մշակումը և FOJD-NARIC համացանցի դերը հատկապես կարևորվում է: ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ համացանում նաև ակտիվորեն քննարկվում է փախստականների որակավորումների ճանաչման դերը աշխատանքի անցնելու առումով:

ԱՓՇԱՏԿ-ի գործունեության շնորհիվ զգալի բարձրացրել է իրազեկվածությունը ՀՀ և օտարերկրյա բարձրագույն կրթական համակարգերի և ազգային որակավորումների վերաբերյալ: ԱՓՇԱՏԿ-ի ինտերնետային կայքում գետեղված է

տեղեկատվություն ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի և շնորհվող որակավորումների, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ:

## **2. Օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում**

ԱՓՇԱՏԿ-ը խորհրդատվություն է տրամադրում ինչպես տեղական և արտասահմանյան կազմակերպություններին, այնպես էլ անհատներին՝ տրամադրելով խորհրդատվական և որակավորման ճանաչման տեղեկանքներ: Տրամադրված տեղեկանքները ուղղված են խթանելու անհատների շարժունությանը այլ երկրներում ուսումը շարունակելիս և/կամ աշխատանքի անցնելիս:

Համաձայն ԱՓՇԱՏԿ-ի և ԱՄՆ դեսպանության միջև դեռևս 2011թ-ին ծեռք բերված երկկողմ պայմանավորվածության՝ ԱՓՇԱՏԿ-ը 2015թ-ին շարունակել է տրամադրել անգլերեն լեզվով խորհրդատվական տեղեկանքներ այն ՀՀ քաղաքացիներին, ովքեր պատրաստվում են մեկնել ԱՄՆ մշտական բնակության: Փորձը ցույց է տալիս, որ տեղեկանքների համար հիմնականում դիմում են միջին մասնագիտական որակավորումներ ունեցող քաղաքացիները:

Ամփոփելով 2015թ. ընթացքում կատարված աշխատանքները՝ կարելի է արձանագրել հետևյալ ցուցանիշները.

- ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1095՝ նախորդ տարվա 1498-ի համեմատությամբ (տե՛ս դիագրամ 1),
- տրամադրված խորհրդատվական տեղեկանքների քանակը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 16%-ով՝ կազմելով 144 գործ,
- ճանաչման որոշում է կայացվել 9 դեպքում: Նշենք, որ նախկինում զգալի թիվ էին կազմում Իրանի Իսլամական Հանրապետությունում շնորհված որակավորումների վերաբերյալ տրամադրված ճանաչման տեղեկանքները: Այս ցուցանիշի անկումը մեծապես կախված է Իրանից եկող ուսանողների թվի կտրուկ կրճատմամբ՝ ելնելով Իրանի ներքաղաքական վիճակից: Առկա են նաև խնդիրներ Իրանում հայկական որակավորումների ճանաչման հետ, մասնավորապես բժշկական և իրավագիտական մասնագիտություններով:
- տրամադրվել է 942 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի հիմնական մասը կազմում է Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը:
- հաշվետու տարվա ընթացքում բացահայտվել են կրթական փաստաթղթերի կեղծման միայն 6 դեպք (որից 4-ը տրամադրվել էին ՀՀ-ում, 2-ը՝ Ռուսաստանի Դաշնությունում), որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան բաժնին:

Հաշվետվությանը կից ներկայացված է ԱՓՇԱՏԿ-ի կողմից 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերլուծությունը, ինչպես նաև օտարերկրյա համագործակցությունների և աշխարհագրությունը...տոկոսային հարաբերակցությամբ

(տես դիագրամ 1 և 2):

### **3. Միջազգային համատեղ ծրագրերի իրականացում**

#### **1. «ԱՐՄԵՆՔԱ - Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակի իրագործում.. ծրագիր:**

2015թ-ի ընթացքում կենտրոնը շարունակել է իր մասնակցությունը ծրագրին և դրա շրջանակներում կազմակերպվող աշխատանքային քննարկումներին, փաստաթղթերի մշակմանը, միջազգային հանդիպումներին և համաժողովներին: ԱՓՇԱՏԿ-ը ծրագրում ներկայացված է 2 մասնագետով: ԱՐՄԵՆՔԱ-ն եռամյա ազգային ծրագիր է (2014-2016թթ.), որն ուղղված է Հայաստանում որակավորումների ազգային և սեկտորիալ շրջանակների ներդրմանը, որակավորումների ճանաչմանը ազգային և միջազգային աշխատաշուկայում:

2015թ-ին հունիսի 22-24-ը ԱՓՇԱՏԿ-ը մասնակցել է Շվեդիայի Լինչոփինգի համալսարանում կայացած վերապատրաստմանը՝ ուղղված կրթական մակարդակի բնութագրիչների և ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպմանը: Հիմնադրամի համար վերապատրաստումը հատկապես կարևոր էր որակավորումների ճանաչման գործընթացում ուսման վերջնարդյունքների, որակավորումների շրջանակների օգտագործման համատեքստում:

Հաշվետու տարվա նոյեմբերի 2-5-ը կենտրոնը մասնակցել է նաև Օսնաբրուկի Կիրառական գիտությունների համալսարանում տեղի ունեցած որակավորումների ոլորտային շրջանակների մշակմանն ուղղված աշխատաժողովին և կոորդինացիոն հանդիպմանը: Միջոցառման ժամանակ եվրոպացի փորձագետների անմիջական ուղղորդմամբ և խորհրդատվությամբ մասնագիտական աշխատանքային հինգ խմբերի կողմից մշակվել է գյուղատնտեսության, իրավագիտության, կրթության, քաղաքաշինության և ֆիզիկայի ոլորտների համար որակավորումների շրջանակների նախնական տարբերակները՝ բակալավրի և մագիստրոսի կրթական աստճանների համար:

Կենտրոնը մասնակցել է ծրագրի շրջանակներում իրականացված բոլոր տեղական և արտասահմանյան հանդիպումներին, ընդգրկված է աշխատանքային խմբերում՝ հանդես գալով խորհրդատվությամբ և մասնակցելով ՈԱՇ-ի իրականացման ձեռնարկի և ընթացակարգերի մշակման աշխատանքներին: Ավելին, կենտրոնը աջակցում է նաև հանդիպումների կազմակերպչական, արձանագրությունների կազմման և ամփոփիչ տեղեկագրի աշխատանքներին:

Ծրագրի շրջանակներում նախատեսված կարգով կենտրոնին տրամադրվել է 2 համակարգիչ, 2 պլանշետ և 1 տպիչ: Ծրագրի կավարտվի 2016թ-ի վերջին:

## 2. Նոր նախաձեռնություններ

2015թ. ԱՓՇԱՏԿ-ը հանդես է եկել մի շարք նոր նախաձեռնություններով, որոնց իրականացումը պլանավորվում է 2016 թվականից:

✓ ՀՀ ԿԳՆ քննարկմանն ու հաստատմանն է ներկայացվել հայկական կրթական համակարգի և բուհերի միջազգայնացման ծրագրի նախագիծը (տե՛ս Հավելված 1): Ծրագիրը նախատեսում է Հայաստանի բուհերի մասնակցությունը միջազգային կրթական ցուցահանդեսներին՝ ՀՀ բուհերի և կրթական համակարգի տեսանելիությունը բարձրացնելու նպատակով:

✓ Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնը միջազգային համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով համագործակցել է նաև ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցի անդամ կազմակերպությունների հետ: Համագործակցության արդյունքում Նորվեգիայի և Իտալիայի ազգային տեղեկատվական կենտրոնները (Norwegian NARIC և Italian NARIC) ԱՓՇԱՏԿ-ին ընդգրկել են որպես գործընկեր կազմակերպություն՝ Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «2016-2018 NARIC Call» դրմաշնորհային ծրագրերին դիմում հայտ ներկայացնելիս: Այդ ծրագրերն են՝

1. Նորվեգիայի ՆԱՐԻԿ կենտրոնի կողմից ղեկավարվող «Փախստականների և տեղահանված անձանց բարձրագույն կրթության ճանաչման գործիքակազմ (Toolkit for recognition of foreign higher education for refugees, displaced persons and persons in refugee-like situation)» ծրագիրը, որի գործընկերներն են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Նիդեռլանդների, Իտալիայի և Հայաստանի ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ կենտրոնները:

2. Իտալիայի ՆԱՐԻԿ կենտրոնի կողմից ղեկավարվող «ՍՔԱՆ-Դ2՝ ազգային ակադեմիական դիպլոմների նմուշներ և պատճեններ (SCAN-D2- Samples and Copies of Academic National Diplomas 2)» ծրագրի երկրորդ փուլ, որի գործընկերներն են Ավստրալի, Էստոնիայի, Ֆրանսիայի, Իռլանդիայի, Իտալիայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Ռումինիայի և Հայաստանի ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ կենտրոնները:

Քանի որ վերոհիշյալ ծրագրերը նախատեսված են միայն ԵՄ անդամ երկրների ՆԱՐԻԿ կենտրոնների համար, և ԱՓՇԱՏԿ-ը ներառվել է բացառության կարգով ու սահմանափակ լիազորություններով, ուստի մեր կենտրոնի համար ֆինանսական աջակցություն չի նախատեսվում: Վերոհիշյալ ծրագրերի իրականացումը առաջին հերթին միջազգային փորձի ուսումնասիրություն և փոխանակություն է ինչպես նաև լավ հնարավորություն է հիմնադրամի համար լինել Եվրոպական նախաձեռնությունների մասնակից և կրող, ինչը նպաստում է կենտրոնի դերի ամրապնդմանը միջազգային ոլորտում: Ծրագրերի հաստատումը և մեկնարկը նախատեսվում է 2016թ-ից:

## 4. ԱՓՇԱՏԿ-ի մասնակցությունը միջազգային համաժողովներին


2015թ-ի հունիսի 7-9-ը ԱՓՇԱՏԿ-ի երեք աշխատակից մասնակցել են Ավստրիայի Բրեգենզ քաղաքում կայացած 22-րդ ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ համացանցի տարեկան համաժողովին: Միջոցառմանը ամփոփվել է ոլորտի վերջին իրադարձությունները և իրականացված ծրագրերը, ներկայացվել է անդամների նոր նախաձեռնությունները, այդ թվում նաև ԵՄ-ի դրամաշնորհների շրջանակում: Քննարկվել են ֆորմալ, ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ճանաչման ներկա և ապագա մարտահրավերները, MOOC զանգվածային բաց առցանց դասընթացների (Massive Open Online Course) հիմնախնդիրները և ավտոմատ ճանաչման հնարավորությունները: Ի թիվս համաժողովին քննարկված մի շարք հարցերի ներկայացվել է նաև փախստականների կրթական փաստաթղթերի ճանաչման Նորվեգիայի և Շվեդիայի փորձը: Քննարկման ժամանակ ներկայացվել է նաև ԱՓՇԱՏԿ-ի փորձը: Կարևոր է նաև, որ Գ. Հարությունյանը հանդես է եկել զեկույցով ներկայացնելով Երևանում կայացած Բոլոնիայի գագաթաժողովի և 4-րդ Քաղաքականության ֆորումի հինական արդյունքները և վավերացված փաստաթղթերը՝ մասնավորապես նշելով ճանաչման ոլորտում նախարարների կողմից արված հանձնարարականները:

2015թ-ի հոկտեմբերի 1-2-ը կենտրոնը մասնակցել է նաև Պրահայի 7-րդ ֆորումին՝ «Համաեվրոպական հարթակ նվիրված կրթության ոլորտում էթիկային, թափանցիկությանը և ինտեգրմանը... թեմայով (7<sup>th</sup> Prague Forum "Towards a Pan-European Platform on Ethics, Transparency and Integrity in Education")»: Ֆորումը անդրադարձել է երեք հիմնահարցերի, որոնցից կենտրոնի համար հատկապես հետաքրքիր էին որակավորումների ճանաչման և դրանց հետ կապված խնդիրների քննարկումը: Խնդիրների մի մասը վերաբերվում էին կեղծ համալսարանների (diploma mills) կողմից տրամադրվող դիպլոմներին, կեղծված կրթական փաստաթղթերին և այն միջոցառումներին, որոնք խթանում են ճանաչման գործընթացների թափանցիկությունը: Ֆորումի ժամանակ նաև ներկայացվել է կրթական փաստաթղթերի ստուգման էլեկտրոնային տվյալների բազայի ստեղծման և օգտագործման փորձը, որը հնարավորություն է տալիս արագ և ստույգ տեղեկատվություն ձեռք բերել կրթական փաստաթղթերի վերաբերյալ, խթանելով դրանց ճանաչումը: Քննարկվել է նաև ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ կենտրոնների դերն ու կարևորությունը կրթության ոլորտում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար իրականացվող գործընթացներում:

## 5. Բոլոնիայի գործընթաց


2015թ.-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին և դրա շրջանակներում անցկացվող միջոցառումներին: Կենտրոնը ներառված էր 2012-2015թթ. Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) աշխատանքներին՝ մասնավորապես ՈԱՇ-ի ազգային ներկայացուցիչների համացանցի (Working Group on National Correspondents for Qualifications Frameworks):

2006-2015 թթ. կատարված աշխատանքները





### Համագործակցության աշխարհագրություն



\*Այլ երկրներ՝ ԱՄԷ, Անգլիա, Ավստրալիա, Ավստրիա, Բելառուս, Եգիպտոս, Եմադան, Թուրքիա, Եստոնիա, Իսրայել, Իտալիա, Իրաք, ԼՂՀ, Կիպրոս, Հունաստան, Ղազախստան, Լիբանան, Լիբիա, Շվեդիա, Շվեյցարիա, Չեխիա, Չեռնոգորիա, Չինաստան, Չինիիա, Սինգապուր, Սլովակիա, Սլովենիա, Սլոբենիա, Ուզբեկստան

2015թ. մարտի 23-ին հիմնադրամի աշխատակիցը մասնակցել Ռիգայում կայացած աշխատանքային խմբի վերջին հանդիպմանը: Հանդիպման ժամանակ ներկայացվել է որակավորումների ազգային շրջանակներին առնչվող զարգացումները և հետագա քայլերը դրանց արդյունվետ գործարկման համար: Մասնակից երկրները ներկայացրել են նաև իրենց ազգային փորձը և գոյություն ունեցող մարտահրավերները:

Ներկայացվել է նաև 2015թ. մայիսի 14-15-ը Երևանում կայանալիք Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի և 4-րդ Քաղաքականության ֆորումի կազմակերպչական աշխատանքների ընթացքը, օրակարգը և այն հիմնական փաստաթղթերը, որոնք պետք է վավերացվեն ԵԲԿՏ-ի նախարարների կողմից:

Կենտրոնի բոլոր աշխատակիցները ակտիվորեն աջակցել են 2015թ-ին մայիսի 14-15-ին կայացած Բոլոնիայի նախարարական գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքներին:

## **6. Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի բյուրո**

Հիմնադրամը, ի դեմս իր տնօրենի, շարունակել է ակտիվորեն մասնակցել Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի բյուրոյի աշխատանքների: Ներկայումս բյուրոն շարունակում է մշակել մի նոր իրավական փաստաթուղթ՝ համատեղ աստիճանների և դրանց ճանաչմանը վերաբերյալ երշխավորություն: Երաշխավորության նախագիծը քննարկվել է 2015թ.-ի ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ համացանցի տարեկան հանդիպմանը, այնուհետև ներկայացվել է FDB (European Consortium for Accreditation)-ի կարծիքին: Երաշխավորությունը փետրվար ամսին կներկայացվի Միջկառավարական կոմիտեի նիստին՝ հաստատման համար:

Բյուրոյի մյուս կարևոր նախաձեռնությունը Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի և նրա հիմնական դրույթների իրականացման մոնիթորինգ-ուսումնասիրությունն է: Կոնվենցիայի անդամ 54 երկրների պետական մարմիններին ուղղարկվել է ընդարձակ հարցաշար, որին պատասանել են 47 երկրներ: Ուսումնասիրությունը և դրա հիմնական արդյունքները նույնպես կներկայացվեն 2016 փետրվարին Միջկառավարական կոմիտեի նիստին:

Կարևոր է նշել, որ կենտրոնը ի դեմս իր տնօրենի զեկույցներով հանդես է եկել նաև այլ միջազգային մի շարք համաժողովների և միջոցառումների ժամանակ:

## ***ՄԱՍ II. Բոլոնիայի քարտուղարություն***

2015թ.-ը ՀՀ ԿԳ նախարարության և Հայկական Բոլոնիայի քարտուղարության համար հատկապես կարևոր էր՝

- մայիսի 14-15-ին տեղի ունեցավ ԵԲԿՏ նախարարական գագաթաժողովը ու Բոլոնիայի գործընթացի 4-րդ քաղաքականության ֆորումը,
- հուլիսի 1-ին տեղի ունեցավ Քարտուղարության պաշտոնական հանձնումը Ֆրանսիային:

Տաս տարի առաջ՝ 2005թ.ին, երբ Հայաստանը Բերգենում միանում էր Բոլոնիայի գործընթացին դժվար էր պատկերացնել, որ տարիներ անց նախարարական գագաթաժողովը կարող է վստահվել ՀՀ ԿԳ նախարարությանը և, որ Երևանը մի քանի օրով կհռչակվի Եվրոպական բարձրագույն կրթության մայրաքաղաք: Սակայն ընտրությունը պայմանավորված էր մի շարք կարևոր հանգամանքներով, մասնավորապես՝ Հայաստանը հետևողականորեն իրականացնում էր Բոլոնիայի հիմնական բարեփոխումները՝ ներգրավելով հիմնական շահառուներին, և ակտիվորեն մասնակցում էր գործընթացի հիմնական աշխատանքային քննարկումներին:

Նախարարական համաժողովին և 4-րդ քաղաքականության ֆորումին ներկա էին 498 մասնակից՝ 47 երկրներից և 28 միջազգային կազմակերպություններից: ԵԲԿՏ-ը ներկայացված էր 44 երկրներով (ներկա չէին Ադրբեջանը, Մալթան և Սլովենիան), Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը և Բոլոնիայի գործընթացի խորհրդատվական անդամները: Ցավոք, Քաղաքականության ֆորումին ներկա էին միայն 2 երկիր:

Մասնակցության մակարդակով և մասշտաբներով Երևանյան միջոցառումները ԵԿԲՏ-ի ամենակարևոր համաժողովներն են: Համաժողովի ժամանակ քննարկված հարցերի շրջանակը ընդարձակ էր և ընդգրկում. ներկայացվեց Բոլոնիայի անդամ երկրների ձեռքբերումները և հիմնական մարտահրավերները, ապագայի վերաբերվող խնդիրները անդրադառնալով բարձրագույն կրթության հիմնական նպատակներին և Բոլոնիայի գործընթացի հիմնախնդիրներին: Ներկայացվեցին նաև խորհրդատվական անդամների կողմից արված ուսումնասիրությունների հիմնական արդյունքները: Համաժողովի վերջում նախարարները միաձայն ընդունեցին Երևանի կոմյունիկեն և 4-րդ Քաղաքականության ֆորումի հռչակագիրը: Համաժողովի մյուս կարևոր ձեռքբերումն էր Բելառուսի անդամակցումը ԵԲԿՏ-ին:

Համաձայն մասնակիցների գնահատականների Երևանյան միջոցառումները անցան մեծ հաջողությամբ, թե՛ կազմակերպչական և թե՛ ընդունված որոշումների առումով, որոնք ամրագրված են Երևանի կոմյունիկեում և 4-րդ Քաղաքականության ֆորումի հռչակագրում.

- առաջին անգամ ամրագրվել է հակամարտության տարածքներում ուսանողների շարժունության և կրթության իրավունքի հարցը, որը շրջադարձային սկզբունք է համաեվրոպական կրթական քաղաքականության համատեքստում,
- բուհերի ակադեմիական ազատության հիմնահարցերը,
- գործընթացի մասնակից ուժերի համախմբումը կառուցվածքային բարեփոխումների ընդլայնման տեսակետից,
- ուսանողների և դասախոհների դերի ընդլայնումը,

- գործընթացի արդյունավետ և առավել թափանցիկ կառավարման մեխանիզմները:

Բոլոնիայի քարտուղարությունը շարունակել է ակտիվորեն աջակցել Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբին (ԲԳՀԽ) և նրա հիմնական աշխատանքային ենթակառուցվածքներին: Քարտուղարությունը զուգահեռաբար մասնակցել է համաժողովի նախապատրաստական բոլոր աշխատանքներին՝ աջակցելով ՀՀ ԿԳ նախարարությանը: Աշխատանքների իրականացման համար ԿԳ նախարարի հրամանով կազմվել էր աշխատանքային խումբ, որը հուլիսի 23-ին գումարել է իր վերջին նիստը՝ ամփոփելով արված աշխատանքները:

Պատվիրակությունների կարծիքների և գնահատականների վերլուծության հիման վրա Բոլոնիայի քարտուղարությունը պատրաստել է անգլերեն լեզվով հաշվետվություն (Հավելված 2), որը ներկայացվել է ԲԳՀԽ-ին: Վերլուծությունը անդրադառնում է միջոցառումների բովանդակային, կազմակերպչական և ֆինանսական հարցերին:

Նաև ներկայացվել է վերջնական ֆինանսական հաշվետվություն և ԿԳ նախարարությանը և Եվրահանձնաժողովին, որը համաֆինանսավորել էր թե՛ Բոլոնիայի քարտուղարության, թե՛ Երևանյան գազաթաժողովի և 4-րդ Քաղաքականության ֆորումի աշխատանքները: Եվրահանձնաժողովը ներկայացված հաշվետվությունը հաստատել էր առանց դիտողությունների (տե՛ս Հավելված 3):